ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՀԱՆ ՊՕՂՈՍ ՃԵԼԱԼԵԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈՏԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿԱՐՕ ԱՒԵՍԵԱՆ
maestro434@yahoo.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Լիբանանահայ յօրինող, դաշնակահար, մանկավարժ եւ երաժշտական-հասարակական գործիչ Պօղոս Ճելալեանն (7 Յունուար 1927, Սուրիա--16 Դեկտեմբեր 2011, Լիբանան) իր կեանքի ընթացքում, ստեղծագործելուն զուգահեռ, զբաղուել է նաեւ մանկավարժական գործունէութեամբ, որի կարեւոր բաղադրիչն են եղել աշակերտական հաշուետու համերգերը:

Մեր նպատակն է քննութեան առնել Ճելալեանի սաների 1996 Մայիսի 12ին հայ կաթողիկէ պատրիարքարանի Արարատեան սրահում կայացած հաշուետու համերգը, ինչպէս նաեւ համերգի մասնակիցների (Անի Կատայեան, Անի Քերոբեան, Ալին Տանձիկեան, Էլտա Տեկիրմենճեան, Նայիրի Սերոբեան-Սեֆէրեան) եւ այլ սաների (Ալին Թեքէլեան, Լիզա Թիւթիւնճեան, Սերուժ Գրաճեան) հետ հարցազրոյցների միջոցով բացայայտել նրա մանկավարժական դասաւանդման մեթոդի առանձնայատկութիւնները:

ՊՕՂՈՍ ՃԵԼԱԼԵԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Պօղոս Ճելալեանը 40 տարեկանում սկսել է դաշնամուրի դասաւանդութիւն College de la Sainte Famille Française՝ Աշրաֆիէի, ապա՝ Ճունիի մասնաճիւղերում: Իսկ 1955-65՝ դասաւանդել է Les Pères Jésuites Collège Notre-Dame de Jamhour՝ մասնաճիւղում, իսկ 1955-60՝ Միշէլ Պուրժոյի[1] յանձնարարութեամբ՝ Ecole Superieure des Lettres de Beyrouth-ում:

1958ի վերջերը, Պէյրութի ազգային երաժշտանոցի ռեկտոր Անիս Ֆուլէյհանը[2], Ճելալեանին նշանակում է նուագակցող սոպրանօ Մարի Կուսե-

[1] Միշէլ Պուրժօ (Michel Bourgeot).- Ֆրանսացի դաշնակահար եւ 1950ականներին Լիբանանում Ֆրանսիական երաժշտական դպրոցի տնօրէն:

[2] Անիս Ֆուլէյհան (1900--1970).- Ամերիկացի երաժշտահան, դիրիժոր եւ դաշնակահար, որ 1953ին ստանձնել է Պէյրութի երաժշտանոցի տնօրէնութեան պաշտօնը:

փցկիի[3], աւելի ուշ՝ Անտոնիա Պերացիի[4] եւ տիկին Ալնիի դասարաններում: Նա մնում է այս պաշտօնում վեցից-եօթ տարի:

1960ականներին երաժշտանոցի նորանշանակ ռեկտոր Նիքոլաս Տալն իր նախկին գործընկերոջն է վստահում տեսական առարկաների՝ սոլֆէժ, ներդաշնագիտութիւն, եւն. դասաւանդումը, ապա՝ դաշնամուրի դասարանը, որը Ճելալեանը վարել է մինչեւ հանգստեան կոչուելը՝ 30 Յունիս 1988[5]:

Որպէս մանկավարժ, Ճելալեանը դասաւանդել է նաեւ Համազգայինի Բարսեղ Կանաչեան երաժշտական քոլէճում՝ 1984-89ին, իսկ 1980-95՝ դասաւանդել է Թեքէլեան երաժշտական դպրոցում[6]: Ճելալեանն ունեցել է բազմաթիւ ուսանողներ[7], որոնք համերգերով հանդէս են եկել տարբեր բեմերում, եւ նրանցից շատերը այսօր շարունակում են իրենց երաժշտական ճանապարհը ե՛ւ որպէս կատարող ե՛ւ որպէս մանկավարժ:

Նկատի ունենալով բազում համերգերի փաստը, մենք անդրադարձել ենք աշակերտական հաշուետու համերգերից մէկին, որ տեղի է ունեցել 12 Մայիս 1996ին: Համերգին ելոյթ ունեցած տաս մասնակիցներից հնարաւոր եղաւ գտնել եօթին: Մենք դիմեցինք նրանց՝ մեր հարցերին պատասխանելու խնդրանքով: Եօթից երկուսը՝ Լարա Մարկոսեանն ու Ֆիլիփ Հաժը հրաժարուեցին պատասխանելուց: Միւսները սիրայօժար տրամադրեցին պատասխանները:

Հարցաթերթիկում ներառուել էին հետեւեալ 7 հարցերը, խնդրելով նաեւ տրամադրել արխիւային նիւթեր տարբեր համերգերից, փաստաթղթեր, գրքոյկներ, մամուլի ակնարկներ եւն…

1. Ձեր կարծիքը Պօղոս Ճելալեան մանկավարժի մասին:
2. Որո՞նք էին այն երաժշտական բարձրագոյն խնդիրները, որոնք Ճելալեանն անհրաժեշտ էր համարում ցանկացած մեկնաբանութեան համար:
3. Ինչպէ՞ս կը նկարագրէք դաշնակահար եւ յօրինող Պօղոս Ճելալեանին եւ նրա ներդրումը լիբանանեան երաժշտական եւ մշակութային կեանքում:

---

[3] Մարի Կուսեւիցկի.- Սոպրանօ եւ երգի դասատու Պէյրութի ազգային երաժշտանոցում 1940ականներին:

[4] Անտոնիա Պերացի.- Լա Սքալա միջազգային թատրոնի սոպրանօ եւ սոպրանօ Արփինէ Փեհլիւանեանի դասատուն Լիբանանի երաժշտանոցում:

[5] Արաքսի Ալթունեան, *Boghos Gelalian L'Homme, Le Musicien, L'Oeuvre*, Université Saint-Esprit de Kaslik, դոկտորական թեզ, Լիբանան, 2002, էջ 23:

[6] Ալին Թեքէլեանի հետ մեր անձնական զրոյցից (16 Մարտի 2023, Լիբանան):

[7] Երաժշտական միջավայրում նրա սաներից են քանատահայ դաշնակահար Սերուժ Գրաճեանը, Լիբանանում հանրածանօթ երաժիշտ, երաժշտահան Զիատ Ռահպանին, Սեւան Քուրումեանը, որ յետագայում երաժշտական կրթութիւնը շարունակեց Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցում, Արտա Քեքլիքեանը, Յարութ Պոշնաքեանը եւ այլք:

4. Ինչպէ՞ս կը բացատրէք Ճելալեանի ստեղծագործութիւնները կատարելու պատասխանատուութեան զգացմունքը՝ իր ներկայութեան եւ յետմահու:

5. Կատարե՞լ էք արդեօք նրա ստեղծագործութիւններից որեւէ մէկը:

6. Դուք մասնակցել էք 12 Մայիս 1996ին ՀԿՄ Արարատեան սրահում կայացած Ճելալեանի աշակերտների համերգին: Ինչպիսի՞ պատասխանատուութիւն էր երաժշտական կատարումով ներկայանալ նրա եւ հանրութեան ներկայութեան: Ինչպէ՞ս կը բնութագրէք այսօր՝ ձեր յոյզերն ու զգացմունքները կապուած այն ջանքերի հետ, որոնք դուք գործադրել էք տպաւորիչ եւ յաջողակ կատարում ձեռք բերելու համար այն ժամանակներում:

7. Եւ վերջապէս, ի՞նչ բան մնաց անաւարտ:

Վերոյիշեալ համերգի մասին ծաւալուն յօդուած է տպագրուել լիբանանեան *L'Orient-Le Jour* թերթում, որը ներկայացնում ենք ստորեւ:[8]

Այս տարի Պօղոս Ճելալեանի սաների հաշուետու համերգը կայացաւ հայ կաթողիկէ պատրիարքարանի Արարատեան համերգասրահում, որը գտնւում է Պէյրութի մերձակայքում՝ Աշրաֆիէ շրջանի Ժեթաուի թաղամասում:

Աւելի քան վեց ամիսների ընթացքում համերգային պատրաստուածութեան մէջ գտնուող սաները ներկայացրին դասական ստեղծագործութիւններից բաղկացած մի շատ գեղեցիկ ծրագիր՝ կատարելով Մոցարթի, Պախի, Պեթովէնի, Տեպիւսիի, Սքարլաթիի, Շոփէնի երկացանկից մի շարք ստեղծագործութիւնների գեղեցիկ ընտրանի:

Հիմնականում ծնողներից, հարազատներից եւ ընկերներից կազմուած հանդիսատեսի ներկայութեամբ, 12-20 տարեկան տաս տաղանդաւոր պատանի եւ երիտասարդ կենսալից ուժեր հանդէս եկան հիանալի կատարումներով:

«*Այս համերգի հիմնական եւ գլխաւոր նպատակներից է երիտասարդ դաշնակահարների բեմական փորձ ձեռք բերելը, ինչպէս նաեւ նրանց ծանօթացնելը միջազգային դասական ստեղծագործութիւններին եւ կատարումներին*»՝ ակնարկում է Ճելալեանը:

Համերգի սկզբում *Հոբոյի առաջի Լիան* հնչեց Քարլա Չամուրեանի կողմից: Լինելով խմբի ամենակրտսերը՝ ընդամէնը 12 տարեկան, նա փայլուն մեկնաբանեց Քլեմենթիի *Սոնաթինի առաջին եւ երկրորդ մասերը*: Դրանք բաւականին թարմ հնչող ստեղծագործութիւններ էին, որոնք հիանալի կատարեց փոքրիկ պարմանուհին իր բոլորը արտայայտաչամիջոցներով եւ նրբերանգներով:

Դալար Մարկոսեանը մեծ ոգեւորութեամբ շարունակեց համերգի ընթացքը, կատարելով Քարլ Չեռնիի *վարժութիւններից համար 2ը եւ 3ը*, արագընթաց եւ ոգեւորող *երկրորդ եւ երրորդ էթիւդները*, աւարտելով Վեպէրի *La Dernière Penséenվ*, որով անխուսափելիօրէն հմայեց հանդիսատեսին:

Ապա հանդէս եկաւ Ժան-Փոլ Աթալլան՝ կատարելով ինը վարիացիաներ Մոցարթի *Ah! Vous Dirai-Je, Maman* ստեղծագործութիւնից՝ գրուած թեմա եւ վարիաց-

[8] Natacha Sikias, Les Eleves de Gelalian au Piano, "Un Recital Tres Printanier", *L'Orient-Le Jour,* Mardi 14 Mai 1996 (ֆրանսերէնից թարգմանութիւնը իմն է – Կ.Ա.):

իաների կառուցուածքով, որը մեծ ոգեշնչութեամբ եւ հիանալի ճկունութեամբ կատարեց այս երիտասարդ դաշնակահարը:

Դարձեալ Մոցարթի գրչից եւ այս անգամ *Սոնատ համար 16 K545 2րդ մասի Անդանթէն*, ապա *Սոնատ համար 2 K280 3րդ մասի Ալեկրօն* կատարեց Ֆիլիփ Հաժը:

Հնչեցին երկու ստեղծագործութիւններ՝ հարուստ եւ լեցուն ներդաշնակութեամբ, հիանալիօրէն իւրացուած, մեծ զգայնութեամբ ու հոսուն երաժշտականութեամբ: Երիտասարդ դաշնակահարը միաձուլուած էր գործիքի հետ: Փակում էր աչքերը, կռանում ու ճօճւում՝ ասես տարուած լինի երաժշտութեան ամբողջական կախարդանքով:

Ինչ վերաբերում է Լարա Մարկոսեանին, ապա նա ընտրել էր Պախի *Ռէ մաժոր փրելիւդը եւ ֆուգան*, ինչպէս նաեւ Մ. Մոշքովսքու *Սոլ մինոր էթիւդը*, որոնք պահանջում են կենտրոնացուած կատարում՝ յատկապէս ուժգնութեան արտայայտամիջոցների հարցում: Երկու հրաշալի ստեղծագործութիւններ, որոնք մեծ թարմութիւն փոխանցեցին իրենց տպաւորիչ մեկնաբանութիւններով:

Համերգի երկրորդ մասը ընթացք ստացաւ կարճատեւ ընդմիջումից յետոյ, այն ներկայացրեց Անի Կատայեանը՝ կատարելով Սքարլաթիի *Սոնատ No. 352 Longo*ը, ապա Տեպիւսիի *Clair de Lune*ը:

Անիի կատարումը հաւասարակշռուած էր. տեմպը դանդաղ, հնչիւնները՝ ընդհատուած ճշգրիտ լռութիւններով: Արձագանգներով ու հնչականութիւններով հարուստ մի ներկայացում, որը մտորումների առիթ էր ստեղծում:



Ճելալեանի մի խումբ աշակերտներ եւ յայտագիրն իր ձեռագրով

Հարցազրոյց Անի Կատայեանի հետ[9]

Երբ կը խօսիմ Պօղոս Ճելալեանի մասին, «դաշնակահար»ն ու «երաժշտահան»ը միաձուլուած եւ փոխկապակցուած կը տեսնեմ անոր մէջ:

Ուստան[10] եռանդուն, խրախուսող եւ ոգեշնչող ուսուցիչ մըն էր: Անոր դասերուն նպատակը ոչ միայն կատարողական արուեստի միջոցներուն հմտօրէն տիրապետելն ու գեղարուեստական որակ ստեղծելն էր, այլեւ կիրթ երաժիշտ եւ ար-

[9] Ե-նամակային հաղորդակցութիւն՝ Երեւան-Պէյրութ, 18 Յունուար 2023ին:

[10] Ճելալեանին դիմում էին «Ուստա» անուանելով, փոխադարձաբար՝ ինքն էլ պատասխանում էր միեւնոյն արտայայտութեամբ, որ նշանակում է վարպետ:

ուեստագէտ պատրաստելը, որ ինքնին պատշաճ բարձրութեամբ պիտի գնահատէր եւ արժեւորէր արուեստի բնագաւառին պատկանող որեւէ աշխատանք:
Երաժշտութեան դասաւանդման անոր մօտեցումը կ'ընդգրկէր ոճի, երաժշտականութեան եւ որակեալ ձայնի եւ հնչիւնի արտադրման միջոցներու կարեւորութիւնը:
Հմուտ մանկավարժ մը ըլլալով, ան մեծապէս օգտակար դարձաւ ինծի՝ երաժշտութեան խորիմաստ բացատրութեան եւ ընկալման առաքելութեան մէջ:
Ան յաճախ կը յուշէր, որ երաժշտութիւնը կը պահանջէ վիթխարի աշխատանք, նուիրուածութիւն եւ առաջնահերթութիւն... վերջինիս բացակայութիւնը եւ «բաւարար ժամանակ չտրամադրելը» քննարկման նիւթ անգամ չէին կրնար ըլլալ:
«Ուստա, եաւրը՛մ», այսպէս կը դիմէր մեզ ... «Երաժշտութիւնը շատ աւելին է, քան պարզապէս Hobby մը: Եթէ կ'ուզես փայլուն դաշնակահար մը ըլլալ, ամբողջ կեանքդ պիտի տրամադրես անոր:
Կ'ուզեմ նաեւ յիշել, որ ան բազմատաղանդ, ստեղծագործ, խանդավառ եւ նուիրուած անձ մըն էր: Ան փայլուն ստեղծագործական երաժշտական միտք մըն էր, ով ոգեշնչեց զիս իր հիանալի ստեղծագործութիւններով եւ նուագախմբային գործիքաւորումներով:
Լիբանանի մշակութային եւ յատկապէս երաժշտական կեանքը զգալիօրէն պիտի նկատէ անոր բացակայութիւնը, ոգեշնչումներն ու ուշադրութիւնը, խրախուսանքներու եւ նոր գաղափարներու բացակայութիւնը:
Իսկ այդ օրուայ ելոյթս՝ Մայիս 12, 1996ի, լեցուն էր լարուածութեամբ եւ անհանգստութեամբ, միեւնոյն ժամանակ հպարտութեամբ: Կ'ուզեմ անկեղծանալ եւ չխուսափիլ այն փաստէն, որ Ճելալեանի ներկայութեան հանդէս գալը այդքան ալ դիւրին չէր երկու տարբեր պատճառներով.
Մասամբ մը այն, որ միշտ կար վրիպելու հաւանականութիւն, եւ երկրորդ՝ արդեօք որքանո՞վ հնարաւոր պիտի ըլլար կատարել Ուստային ստեղծագործութիւնները՝ իր ներկայութեան, այնպէս՝ ինչպէս որ ինք կը ցանկար լսել եւ ոչ թէ այնպէս ինչպէս մենք կ'ուզէինք որ հնչէր:
Համերգերու ժամանակ կը փորձէի կեդրոնանալ այն բոլոր մանրամասնութիւններուն վրայ, որոնք կ'ուսուցանէր Ուստան եւ կը կրկնէր բազում անգամներ:
Համերգէն ետք՝ տօն էր, ուղղակի տօն... Մտահոգութիւնն ու տագնապը կը վերանային, ի բացառեալ մէկ հոգէ, այդ ալ Ուստայի կարծիքն էր, թէ ի՛նչ պիտի ըսէր ան... Ան շատ առարկայական էր իր քննադատութիւններուն մէջ եւ անպայման կ'ակնարկէր բոլոր մանրամասնութիւնները:
Ես սորվեցայ Ճելալեանի բոլոր դաշնամուրային ստեղծագործութիւնները, սակայն համերգային կատարումով միայն «Պարը» կատարած եմ, թէեւ միշտ կը ցանկայի անոր ներկայութեան կատարել *Tre Cicli*ն, բայց հնարաւորութիւն եւ առիթ չեմ ունեցած ի ցաւ սրտի:
Ինծի համար մեծ պատիւ է կոչուիլ Ճելալեանի աշակերտը: Մինչեւ օրս մեծ հաճոյքով է, որ կը նուագեմ Տեպիւսիի *Լուսնի լոյս*ը եւ Սքարլաթիի բոլոր ստեղծագործութիւնները, որոնք աշխատած ենք միասին: Անոր ձայնը մինչեւ այսօր լսողութեանս մէջ է, ինչպէս նաեւ անոր երգած ոճը, երբ երգելով կը բացատրէր երաժշտական հատուածները, որպէսզի կատարեալ հնչէ:
Անաւարտ մնաց այն, որ նման տաղանդաւոր երաժշտահանը, հոգատար եւ անգնահատելի անձնաւորութիւնը մնաց անյայտ ողջ աշխարհի համար...:

«Անի Քերոբեանը ընտրել է Սարաճեանի երկու ստեղծագործութիւնները՝ *Երգ առանց խօսքի*ն եւ *Հովուերգակա*ն՝ որոնք կատարեց մեծ աշխուժութեամբ: Այնուհետեւ, նա ոգեւորեց հանդիսատեսին Պեթովէնի *Սոնատ համար 5, op. 10 համար* Ի առաջին մասի իր հրաշալի մեկնաբանու-թեամբ»[11]:

Հարցազրոյց Անի Քերոբեանի հետ[12]

Մայեստրօ Ճելալեանին ծանօթացել եմ ծնողներիս միջոցով, որոնք մեծ սիրահար էին դասական երաժշտութեան եւ տան մէջ նուագում էին նաեւ իրենք: Բազմիցս ներկայ եմ գտնուել իր համերգերին, ինչպէս նաեւ այլ երաժիշտների ելոյթներին, որոնք կատարում էին նրա ստեղծագործութիւնները:

Մեծ պատիւ է ինձ համար կոչուել նրա աշակերտը: Իսկ նուաճած միջազգային յաջողութիւններիս համար յաւերժ երախտապարտ կը մնամ սիրելի մայեստրոյին:

Նրա աշակերտը լինելը մեծ պատասխանատուութիւն էր, իսկ դասարանային հաշուետու համերգերում ելոյթ ունենալը նշանակում էր խիզախաբար հանդիսադրել դաշնամուրային մասնագիտական հմտութիւններն ու միջոցները, որ բծախնդրօրէն պահանջում է կատարողական արուեստը:

Դաշնամուրի դասերի ժամանակ նոր դասական ստեղծագործութիւնների ունկնդրումները անհաւատալիօրէն ոգեշնչող էին: Երբ նուագում էի, նա խորհուրդ էր տալիս, որ ոչ միայն կատարեմ այն ինչը գրուած է նոտաների մէջ, այլեւ այն բոլորը որ նոյնիսկ չի նշուել երաժշտահանի կողմից:

Նրա ստեղծագործութիւնները կատարելը սրբազան արարողութիւն է իմ համար, յատկապէս երբ հենց մայեստրոյի ցուցմունքներով եմ կատարում նրա գործերը:

Իւրաքանչիւր դասից յետոյ երբ հեռանում էի՝ մի քայլ աւելի մօտենում էի միջազգային կարիերային: Ցաւօք մեր վերջին հեռախօսազրոյցը մայեստրօ Ճելալեանի հետ եղաւ իր մահից քիչ առաջ:

Ես ապրում էի Քանատայում եւ ուղարկել էի Հայտընի, Պրամսի, Ճելալեանի եւ Պարպըրի իմ վերջին ձայնագրութիւնները: Այն պահին, երբ զանգահարեցի, նա պատասխանեց եւ մեծ ուրախութեամբ ասաց, որ լսել է իմ ձայնագրութիւնները եւ դրանք համարում է յաջողուած: Ովկիանոսներից հեռու մի անգամ եւս Ուստայի ուրախ ձայնը լսելը շատ մեծ ոգեւորութիւն եւ թանկագին արժէք էր իմ համար:

«Ալին Տանձիկեանը իր հերթին կատարեց Չայքովսքու *Տարուայ եղանակներից «Յունիսն» ու «Օգոստոսը»*: Շրջադարձութիւններով եւ անակնկալներով լեցուն մի ստեղծագործութիւն, եւ կամ ինչպէս լինում է անսպասելի պատմուածքներում, կշռոյթը հանդարտւում է միայն աւելի ուժեղ եւ զօրեղ վերսկսելու համար: Այդ մենք ենք մեզ թոյլ տալիս հաճելիօրէն ցնցուել մեղեդու քառսային ալիքներով»[13]:

---

[11] Sikias:

[12] Ե-նամակային հաղորդակցութիւն՝ Լոս Էնճըլըս-Պէյրութ, 27 Փետրուար 2023ին:

[13] Sikias:

Հարցազրոյց Ալին Տանձիկեանի հետ[14]

Պարոն Ճելալեանը կամ Ուստան, միանշանակ հրաշալի մանկավարժ էր: Յիշում եմ, որ Ուստայի համար կարեւոր էր նաեւ մեկնաբանութեան զգացականութիւնը: Մի անգամ խնդրեց պատրաստել Շոփէնի *Նոքթիւրնը՝ մի պեմոլ մաժոր, երկ 55/2*: Մի պահ մտածեցի, որ այս ստեղծագործութիւնը կարծես հեշտ է իմ համար, յատկապէս երբ շատ աւելի բարդ գործեր էի կատարել: Սակայն նա ստիպեց որ երկար ամիսներ մնամ այս «հեշտ» ստեղծագործութեան վրայ, ոչ միայն զարգացնելով այն տեխնիկապէս, այլ կենտրոնացնելով աշխատանքը նաեւ կատարողական խնդիրների վրայ:

Շատ անգամներ ստիպում էր կրկնել միեւնոյն հատուածը՝ միքանի անգամ ուղղորդելով, թէ ինչպէս արտացոլեմ տուեալ մասի ամենաբնական երաժշտական արտայայտչականութիւնը, մինչեւ որ ես ինքս կարողանայի այն հնչեցնել իր ակնկալած արտայայտչականութեամբ եւ զգայունութեամբ: Երբեմն խօսք էր գնում ուղղակի մէկ նոտայի յատուկ շեշտադրման մասին, որը նոր կեանք էր հաղորդում մի ամբողջ երաժշտական պարբերութեանը: Այնուհետեւ, նա հիացմունքով եւ բաւարուած ասում էր իր յայտնի «Եա՛ սալա՛մ»ը[15] եւ թոյլ տալիս շարունակել ստեղծագործութիւնը: Ուստայի առաջնորդութեամբ նոյնիսկ ձախ ձեռքի նուագակցութիւնը դարձաւ շատ երգային եւ մեղեդային:

Սա հիանալի փորձ էր իմ համար եւ թոյլ տուեց ինձ բացայայտել, թէ որքան կարեւոր է զգայունութիւնը եւ թէ ինչքան այն կարող է զարդարել եւ հարստացնել երաժշտութիւնը: Այս *Նոքթիւրն*ից առաջ ես աւելի տպաւորուած էի տեխնիկապէս դժուար ստեղծագործութիւններով: Որպէս հմուտ մանկավարժ՝ Ուստան լաւ գիտէր իմ թոյլ կողմերը եւ ստիպեց ինձ աշխատել դրանց վրայ, որից յետոյ սկսեցի դաշնամուրը նուագել բոլորովին այլ կերպ՝ շատ աւելի խորը զգայնութեամբ:

12 Մայիս 1996. մի հրաշալի օր: Այդ տարին հնարաւորութիւն ունեցայ Ուստայի տարեկան երկու հաշուետու համերգերին էլ մասնակցել: Իւրաքանչիւր համերգի պատրաստութեան համար ամիսներ շարունակ պարապում էի, որպէսզի ամէն ինչ կատարուի եւ ներկայացուի յաւուր պատշաճի:

Նկատեցի, որ Ուստան իր ձեռագրով է գրել համերգի ամբողջ ծրագիրը: Յաջորդ համերգին նրան առաջարկեցի ծրագիրը պատրաստել համակարգչային տպագրութեամբ: Նա ինձ բացատրեց, որ իրեն դուր չի գալիս ծրագրի մեքենայագրուած տարբերակը, եւ որ ձեռագիրը շատ աւելի սիրուն է: Իսկ ես բացատրեցի նրան, որ մենք համակարգչով կարող ենք ունենալ գեղեցիկ տառատեսակներ, եւ ցոյց տուեցի մի օրինակ: Նա շատ ուրախացաւ տեսնելով արդիւնքը, եւ հաւանութիւն տուեց, որ իրեն տրամադրեմ համակարգչով մուտքագրուած ծրագիրը գեղեցիկ տառատեսակով, որը շատ նման էր ձեռագրի:

Այսօր ես երգեհոն եմ նուագում ամէն կիրակի Պէյրութի Ս. Եղիա-Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում հայկական պատարագի ժամանակ եւ օրհնում եմ դաշնամուրի ուսուցիչներիս՝ Արփի Ջրոյեանին եւ Ուստային այն ամէնի համար, ինչ նրանք տուել են ինձ:

---

[14] Այն տեղի ունեցաւ 15 Յունուար 2023ին, Լիբանան:

[15] Դրուատական արաբերէն բացականչութիւն, որ նշանակում է «հրաշալի»:

«Եւ ահա շոփէնեան վալս՝ Էլտա Տեկիրմենճեանի կատարողութեամբ: Հրաշալի կատարումով հանդէս եկաւ Էլտա Տեկիրմենճեանը Շոփէնի *Վալս համար 2, Օբ. 34 համար 1*ով: Մի ստեղծագործութիւն, որն առանձնանում է իր իւրայատուկ բարդութեամբ եւ պահանջում մեծ երաժշտական պատրաստուածութիւն: Նրա մատները հանդիսաւոր արագութեամբ պարում էին ստեղնաշարի վրայ, այնուհետեւ առաւել գեղեցկանում կրկնուող հատուածի հետ»[16]:

Հարցազրույց Էլտա Տեկիրմենճեանի հետ[17]

Ինչքան էլ պատմեմ կամ նկարագրեմ, դեռեւս շատ բարդ է ճիշտ ձեւով բնութագրել Պօղոս Ճելալեանին: Նա շատ նրբանկատ էր եւ բծախնդիր: Ինչքան էլ անսխալ եւ անսայթաք կատարէի երաժշտութիւնը, մէկ է՝ նա ոչ մի անգամ դրական չէր արտայայտուի: Նոյնիսկ իմ երկու անհատական համերգերը աւարտելուց յետոյ, երբ մի հոծ բազմութիւն ողջունում էր ինձ, նա մօտենում էր եւ շշուկով յուշում, որ տուեալ հատուածը աւելի արագ է ստացուել… իսկ միւսը դանդաղ… դա մի տեսակ ինձ անհանգստացնում էր, սակայն աւելի ուշ զգում էի, որ դա ինձ օգնում էր, որ աւելի ուշադիր լինեմ եւ աւելի շատ պատրաստուեմ փայլուն կատարումով հանդէս գալու համար յաջորդ համերգերում:

Նրա մահից բաւական տարիներ անցել էին երբ հայրս մի օր պատմեց, որ հենց այդ համերգերից որոշ ժամանակ անց, Ճելալեանը հանդիպել է նրան եւ ասել որ, «*Էլտան հրաշալի կատարեց ամբողջ ծրագիրը եւ յատկապէս Պախը: Անմիջապէս համերգից յետոյ այն ասելը կարող էր իրեն մեծամտութեան պատճառ դառնալ: Կարող եմ ասել, որ իմ ուսանողներից ոչ ոք նման հիանալի մեկնաբանութեամբ Պախ դեռեւս չի կատարել*»: Այս մէկը բնականաբար ինձ առաւել ոգեւորեց: Եւ մի գուցէ պատճառներից մէկն էր, որ իմ համար աւելի ուշ փոխադրեց Պախի հռչակաւոր Ռէ մինոր Թոքքաթա եւ ֆուկան դաշնամուրի համար եւ նուիրեց ինձ՝ իր ձեռագրով փոխադրուած այս հրաշալի ստեղծագործութիւնը: Ես այն կատարեցի իմ մենահամերգերից մէկի ընթացքում, որի համար խորապէս երախտապարտ եմ Ուստային:

«Եւ վերջապէս, համերգը եզրափակեց Նայիրի Սերոբեանը Կրանատոսի *Գոյեսկաս համար 4* (*Գեղեցկուհին եւ սոխակը*) եւ *Սպանական պար համար 9* երկու ստեղծագործութիւնների ներդաշնակ եւ համաչափ կատարումով»[18]:

Հարցազրույց Նայիրի Սերոբեան-Սեֆէրեանի հետ[19]

Պօղոս Ճելալեանը ոչ միայն մեծ կոմպոզիտոր էր, այլ նաեւ գիտակ ռազմավարերաժիշտ: Շատ լաւ գիտէր, ինչպէս ընտրել համապատասխան երկացանկ իւրաքանչիւր ուսանողի համար: Նա բոլորիս սովորեցրեց այն հմտութիւնները, որոնք անհրաժեշտ էին իւրաքանչիւր ստեղծագործութիւն փայլուն կատարելու համար: Իսկ ուսուցման մեթոդը որը նա կիրառեց, թոյլ տուեց մեզ բովանդակալից լուծումներով եւ գիտելիքներով իմաստաւորել մեր կատարած երաժշտութիւնը:

---

[16] Sikias:

[17] Այն տեղի ունեցաւ 28 Յունուար 2023ին, Լիբանան:

[18] Sikias:

[19] Այն տեղի ունեցաւ 11 Յունուար 2023ին, Լիբանան:

Նրա համար ամենակարեւոր յատկանիշերից մէկը զգացմունքայնութիւնն էր: Բազմիցս յիշեցնում էր, որ դաշնամուրի իւրաքանչիւր ստեղին պէտք է դիպչել մեծ ուշադրութեամբ եւ զգուշութեամբ, որպէսզի երաժշտութիւնը լիարժէք հասնի ունկնդրի սրտին:
Ինձ համար մեծ պատասխանատուութիւն ու մարտահրաւէր էր նրա ստեղծագործութիւնները կատարելը յատկապէս հանդիսատեսի առաջ, ինչպէս նաեւ մեծ համարձակութիւն էր ելոյթից յետոյ ստանալ նրա անկեղծ կարծիքը:
1992ի համերգի ժամանակ նուագել եմ նրա ստեղծագործութիւններից *Նազ պարը*, որը գրել է 1983ին:
Անցնելով մայիսեան գարնանային համերգին, կ'ուզենայի յուշել որ այդ օրուայ մասնակիցներն անձանօթ էին, որովհետեւ ես ընդհանրապէս մասնակցում էի տարիքով աւելի մեծ աշակերտների հետ, որն համարւում էր «մեր խումբը»: Իսկ թէ ինչու էր նա ուզում, որ մասնակցեմ այս խմբի հետ… դա արդէն ես չգիտեմ:
Ամէն դէպքում, ես ինձ տարօրինակ էի զգում, բայց ամէն ինչ անում էի, որ դա չզգացուի: Նաեւ Կրանատոս կատարելը մեծ պատասխանատուութիւն էր, եւ այն ստեղծագործութիւնները, որոնք պարոն Ճելալեանը ընտրել էր ինձ համար, պահանջում էին բծախնդիր աշխատանք եւ քրտնաջան պարապմունք: Դէ… ես սիրահարուած էի «Կոյեսքաս»ին, եւ այդ ժամանակ ոչինչ կարեւոր չէր: Ես ամէն ինչ արեցի, որ Ուստային չհիասթափեցնեմ, եւ կարծում եմ, որ համերգի վերջում նա գոհ մնաց իմ ելոյթից եւ ասաց՝ «*պրաւо', Ուստա'*» եւ համբուրեց ճակատս:
Յիշում եմ մի անգամ դարձեալ համերգ ունէինք: Իմ հերթն էր եւ պէտք էր նուագէի երկու ստեղծագործութիւն: Առաջինը աւարտելուց յետոյ, սկսեցի երկրորդը եւ յանկարծ նկատեցի, որ քթիցս արիւն սկսեց հոսել, եւ բնականաբար խուճապի մատնուեցի: Պարոն Ճելալեանը բեմ բարձրացաւ եւ խնդրեց որ կանգ առնեմ: Չգիտեմ ինչպէս եւ որտեղից սուրճ բերեցին ու քթիս մէջ դրեցին: Մինչ այժմ ես չեմ հասկանում, թէ որտեղից են այդ սուրճը ստացել: Մի տեսակ տհաճ երեւոյթ էր:
Կարծում եմ երաժշտութեան աշխարհում չկան սահմաններ: Ինչ վերաբերում է ինձ, ես չկարողացայ պարոն Ճելալեանի ժառանգութիւնը փոխանցել իմ դուստրերին, քանի որ նրանք դաշնամուր նուագել չսովորեցին: Ինչ վերաբերում է պարոն Ճելալեանին, ապա կարծում եմ, որ նրա երաժշտութիւնը պէտք է աւելի շատ ներկայացնել աշխարհին եւ կատարել ոչ միայն դաշնամուրով, այլ նաեւ նուագախմբով:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ ՊՕՂՈՍ ՃԵԼԱԼԵԱՆԻ ՄԻԽՍ ՍԱՆԵՐԻ՝ ԱԼԻՆ ԹԵՔԷԼԵԱՆԻ, ԼԻԶԱ ԹԻԽԹԻՒՆՃԵԱՆԻ ԵՒ ՍԵՐՈՒԺ ԳՐԱՃԵԱՆԻ ՀԵՏ

Այստեղ աւարտւում են այն հինգ սաների հարցազրոյցները, որոնք մասնակցել էին 12 Մայիս 1996ին տեղի ունեցած համերգին: Ճելալեանի մանկավարժական մեթոդի առանձնայատկութիւնները պարզելու նպատակով մենք դիմեցինք նաեւ Ճելալեանի այլ ուսանողների, ովքեր եւս վայելել են նրա մանկավարժական հմուտ եւ բարձրորակ փորձը եւ այսօր երաժշտական կեանքում հասել են բարձունքների: Մեր խնդրանքով նրանք եւս խօսեցին Ճելալեանի ուսուցողական եւ մանկավարժական փորձի եւ գիտելիքի անսպառ զինանոցի մասին: Նրանց թւում են Թեքէլեան երաժշտական

դպրոցի տնօրէնուհի Ալին Թեքէլեանը, Լիզա Թիւթիւնճեանը եւ Սերուժ Գրաճեանը:

Հարցազրոյց Ալին Թեքէլեանի հետ[20]

Նրանց համար, ովքեր չեն ճանաչում Պօղոս Ճելալեանին, ասեմ որ, առաջին հանդիպումից նա կարող է թուալ վախեցնող, նեարդային, անհամբեր եւ խիստ հայեացքով մի անձնաւորութիւն: Սակայն ինձ համար, որպէս իր աշակերտը, նա երկրորդ հայր էր՝ բառիս բուն իմաստով:

Նա օժտուած էր մեծ եռանդով իր աշխատանքի նկատմամբ, որը յաճախ զարմացնում էր նաեւ իր շրջապատին: Ծով համբերութիւն ունէր եւ ճկուն քաղաքականութիւն էր վարում իր ուսանողների հետ: Քննութիւնների եւ համերգերի ժամանակ դասերի քանակը բազմապատկւում եւ երկարաձգւում էր ինքնաբերաբար, առանց նոյնիսկ ստուգելու դասի տեւողութիւնը:

Աշխատում էր ողջ գիշերուայ ընթացքում՝ նոր ստեղծագործութիւններ պատրաստելու իր աշակերտների համար, իսկ յետոյ մնում եւ ստեղծագործում էր օրուայ մինչեւ վաղ ժամերը ընդհուպ մինչեւ արշալոյս:

Նա երբեք չի դադարել ինձ օգնել դաշնամուրային տեխնիկայի տիրապետելու հարցում, որի համար ունէր դասաւանդման իր իւրայատուկ ոճն ու մեթոդը: Իսկ տեսութեան եւ ներդաշնագիտութեան գիտելիքները որ փոխանցում էր՝ կատարեալ օրինութիւն էին իմ համար:

Երաժշտական ասպարէզում նրա կատարելութեան ձգտելը յարգանք եւ վստահութիւն էր փոխանցում բոլորին: Նա համարւում էր իր շրջապատի ազնիւ, հաւատարիմ եւ վստահելի ընկերը, յատկապէս իր բարձր քաղաքավարութեամբ, որի պատճառով վայելում էր շրջապատի մեծ յարգանքը:

Այն ժամանակ Թեքէլեան երաժշտական դպրոցի աշակերտուհի էի, երբ 1985ին յանձնեցի իմ 5րդ տարուայ վկայականի քննութիւնը տիկ. Նորա Ռումեանի մօտ եւ ընդունուեցի Լիբանանի ազգային երաժշտանոցը շարունակելու կրթութիւնս տիկին Մատլէն Մտաուարի մօտ, բայց միեւնոյն ժամանակ պարոն Ճելալեանի հետ մասնաւոր դասեր էի առնում, եւ ամէն Ուրբաթ եւ Շաբաթ այնտեղ դասաւանդում էի սկսնակ աշակերտներին նկատի ունենալով, որ Ճելալեանն էլ էր Թեքէլեանում դասաւանդում եւ հարցերի դէպքում անվարան դիմում էի նրան: Եւ այդպէս շարունակեցի նրա մօտ սովորել գրեթէ 10 տարի մինչեւ իմ 10րդ տարուայ դաշնամուրի վկայականը ստացայ Ազգային երաժշտանոցից:

Պարոն Ճելալեանը որպէս կոմպոզիտոր չափազանց կարեւոր տեղ ունի ե՛ւ լիբանանեան ե՛ւ միջազգային երաժշտական մշակութային ասպարէզում: Նրա ստեղծագործութիւնները միշտ արեւմտաեւրոպական երաժիշտների ուշադրութեանն են արժանացել, նրա իւրայատուկ ոճն ու բնորոշ երաժշտական լեզուն, ոգեշնչել ու վերարակաւորել են նրա ստեղծագործութիւնները:

Նրա գործերից կատարել եմ *Sonate Breve pour Piano, Tre Cicli, Sonate pour Pianoforte*ն:

[20] Այն տեղի ունեցաւ 16 Մարտի 2023ին, Լիբանան:

Հարցազրույց Լիզա Թիւթիւնճեանի հետ[21]

Որպէս մանկավարժ՝ Ճելալեանի հիմնական խնդիրն եղել է այնպիսի ուսանող պատրաստելը, որ իր երաժշտական բոլոր հմտութիւններով կարողանայ ապագայում ինքնուրոյն կատարել ցանկացած բարդութեան ստեղծագործութիւն ամենաբարձր երաժշտական արժէչափերով:

Նա օժտուած էր մեծ համբերութեամբ, հաստատակամութեամբ եւ վճռականութեամբ՝ ուսուցելու այն ուսանողը, ով բաւականաչափ հետաքրքրուած է իմանալու երաժշտութեան մէջ թաքնուած բոլոր գաղտնիքների մասին:

Ուստային ճանաչում էի երաժշտանոցից որպէս շատ խիստ պրոֆեսոր: Ոչ ոք չէր համարձակւում լինել նրա դասարանում: Իմ նախկին պրոֆեսորի հետ մեծ քննարկումից եւ անհասկացողութիւնից յետոյ ես դուրս եկայ շէնքից եւ որոշեցի թողնել դաշնամուրը: Պատահաբար, նոյն կէսօրին տեսայ դիրիժոր Վաչէ Պարսումեանին[22]: Ինչ-որ կերպ նա տեղեակ էր իմ խնդրի մասին եւ հեգնանքով ընդունելով իմ որոշումը, քաղցր ժպիտով ձեռքիցս բռնած գնացինք Բարսեղ Կանաչեան երաժշտական քոլէճ, որտեղ պրոֆ. Ճելալեանը նոր էր նշանակուել՝ ընդունելու առաջադէմ ուսանողներին իր դասարանում: Այնքան ամաչում էի եւ անվստահ էի, որ չկարողացայ ոչ մի բառով արտայայտուել: Իսկ ինք շատ մեղմ ժպիտով ինձ ծրագիր նշանակեց յաջորդ շաբաթ պատրաստուելու համար:

Հպարտութեամբ կարող եմ ասել, որ նրան աշակերտել եմ 1984ի Սեպտեմբերի իմ առաջին դասից մինչեւ 2011ի Հոկտեմբերի վերջերը, երբ նա ուղեղի կաթուած ստացաւ:

Նրա մանկավարժական մեթոտը ընդգրկում էր միմիկայի, դէմքի եւ ձեռքերի իւրայատուկ արտայայտութիւններ, որոնցով բացատրում էր մեկնաբանութեան նրբութիւնները: Դրանք օգնում էին ուսանողներին ասուածը արագ ըմբռնելու:

Ճելալեանը երբեք չէր ընդունում որ իր ստեղծագործութիւնները կատարուեն եւ բարձրաձայն յայտարարուեն: Երբ փորձում էի նրան համոզել, որ դրանք կարեւոր աշխատանքներ են՝ նա ասում էր «եաւրում, այնքան գլուխգործոցներ կան մեր երկացանկում, որ ժամանակ չկայ այդ մանրուքների համար»:

Մի անգամ համարձակուեցի միայնակ սովորել նրա *Tre Cicli*ն, եւ մինչ նա խոհանոցում իր կէսօրուայ սուրճն էր պատրաստում, սկսեցի այն նուագել: Նա մնաց այնտեղ: Աւարտեցի ցիկլը, եւ ինքս գնացի նրա մօտ: Բացեց աչքերը, դէմքին հեգնական մի ժպիտով գլուխը բարձրացրեց եւ ո՛չ մի բառ...: Նրա սիրելի կինը՝ Ռայմոնտը, Էթիէն Քիւփէլեանի[23] քոյրը, ներս մտաւ եւ ասաց. «*Այստեղ ասելու ոչինչ չկայ: Ցիկլը ստացուել է...*»: Այդ պահից յետոյ ես ոչ մի անգամ չեմ կրկնել այդ ստեղծագործութիւնը:

Իսկ եթէ Ճելալեանի ուսմունքը մէկ բառով պիտի բացատրել այն էլ **հնչիւնն** է...[24]

---

[21] Այն տեղի ունեցաւ 8 Ապրիլի 2023ին, Լիբանան:

[22] Վաչէ Պարսումեան.- երաժշտագէտ, խմբավար, Պէյրութի Բարսեղ Կանաչեան երաժշտական քոլէճի եւ Կլենտէյլի «Լարք» երաժշտական ընկերակցութեան հիմնադիր:

[23] Էթիէն Քիւփէլեան.- Լիբանանի ֆիլհարմոնիք նուագախմբի գլխաւոր հոպոյիսթ:

[24] Երաժշտագիտականօրէն հնչիւնը համարւում է կատարողական արուեստի գերխնդիրներից մէկը: Այն վերաբերում է կատարողականութեան ընթացքում ամենաբարձր ձայնային որակ ստանալուն, որը նուաճում է արուեստագէտ կատարո-

Հացազրոյց Սերուժ Գրաճեանի հետ[25]

Ճելալեանի մօտ սովորել եմ վաղ հասակում մինչեւ Քանատա փոխադրուելս: Յիշում եմ, որ նա շատ խստապահանջ էր: Նրա ամենայատկանշական մանկավարժական կարողութիւններից մէկն այն էր, որ շատ լաւ կարողանում էր մշակել աշակերտի տաղանդն ու երաժշտական տուեալները:

Նա նաեւ շատ հետեւողական էր եւ գիտէր անուղղակիօրէն պարտադրելու ձեւը: Նրա դասերի մէջ միշտ ուժ եւ ոգեւորութիւն կար, իսկ իւրաքանչիւր աշակերտ ունէր իր յատուկ տեղն ու արժէքը:

Շատ էր աշխատում մատների հնարաւորութիւնները զարգացնելու հարցում, այդ իմաստով առաւելաբար կենտրոնանում էր Սքարլաթիի սոնաթների վրայ եւ իւրայատուկ ձեւով ապահովում էր մատների ճկունութիւնն ու արագութիւնը: Նա ընտրում էր Սքարլաթին իմանալով, որ հենց նա է գրել իր անձնական վարժութիւնները եւ այդ երեւոյթը նրան շատ էր տպաւորել:

Իր ուսուցմունքի մէջ նաեւ բացատրում եւ սովորացնում էր տեսութիւն եւ ներդաշնագիտութիւն, խորհուրդ տալով լսել տարբեր դաշնակահարների կատարումներին, սակայն ինք անձամբ նախընտրում էր Արթուրօ Պենետեթթի Միքէլանճելիի մեկնաբանութիւնները:

Շատ էր կարեւորում համերգերը եւ դրանց մասնակցութեան փաստը եւ միշտ փորձում ամէն գնով դրանք կազմակերպել, իսկ դահլիճ չլինելու դէպքում հնարաւորութիւն էր ստեղծում յարմարաւէտ տան պայմաններում:

Այլ պատճառներից մէկը, որ Ճելալեանին յարգում էին որպէս դաշնակահար, այն էր, որ նա բազմակողմանիօրէն զարգացած երաժիշտ էր, նրա մօտ առկայ էր ե՛ւ հայկականը ե՛ւ միջազգայինը ե՛ւ արաբականը:

Ունէր մի շատ յայտնի նշանաբան, որ յաճախ կրկնում էր ասելով. «Երաժշտութիւնը սահմաններ չի ճանաչում»:

Իր ստեղծագործութիւններից կատարել եմ *Նազ պարը*, *Դաշնամուրի սոնատը* *Sonata Per Pianoforte*ն եւ *Sonate Breve*ը:

Ճելալեանը բարձրաճաշակ անձնաւորութիւն էր գեղագիտական եւ յատկապէս երաժշտական ժանրում: Շատ կ'ուզենայի նրա կարծիքը լսել իմ կատարած մշակումների, յատկապէս վերջերս իմ գրած *Հազարան բլբուլ* մանկական օպերայի մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1. Պօղոս Ճելալեանն իր մանկավարժական գործունէութեամբ նպաստել է Լիբանանում դաշնակահարների պատրաստմանը: Նրա սաների թւում են եղել ինչպէս հայ, այնպէս էլ արաբ պատանիներ ու աղջիկներ: Դրանով իսկ նա կարեւոր ներդրում է ունեցել լիբանանեան կատարողական դպրոցի զարգացման գործում:

ղը հնչեցնելով իւրաքանչիւր երաժշտական բարձրութիւն (նոտա) ամենաբիւրեղ, շողազարդ եւ լուսաւոր գոյներով՝ ապահովելով ձայնային թրթիռների ամենայագեցած հնչողութիւնը ցանկացած արագութեան պարագային:

[25] Ե-նամակային հաղորդակցութիւն, Քալիֆորնիա-Պէյրութ, 13 Մարտի 2021ին:

2. Նրբանկատ ու միաժամանակ՝ բծախնդիր, խստապահանջ, իր սաներին գովեստի խօսքեր երբեք չշռայլող, անգամ յաջողուած ելոյթից յետոյ նոյնիսկ աննշան թերութիւնները մատնանշող, միաժամանակ՝ նրանց կողմից որպէս երկրորդ հայր ընկալուող Ճելալեանի բոլոր սաները միաբերան իրենց երջանիկ են համարել Ուստային աշակերտելու համար եւ միշտ երախտապարտ են եղել նրան՝ իրենց ստացած գիտելիքների համար:

3. Լինելով հմուտ մանկավարժ՝ Ճելալեանն անմիջապէս պարզում էր աշակերտի թոյլ կողմերը եւ յատուկ ուշադրութիւն դարձնում դրանց վրայ: Նա բացայայտում էր աշակերտի երաժշտական տուեալներն ու կարողութիւնները եւ զարգացնում դրանք՝ նրան տալով իրեն համապատասխան ծրագիր:

4. Մեծ տեղ յատկացնելով ստեղծագործութեան կատարման արհեստագիտական կողմին, մասնաւորապէս՝ մատնային տեխնիկային, միեւնոյն ժամանակ Ճելալեանը պահանջում էր զգացմունքայնութիւն, ոչ միայն տեքստի անսխալ կատարում, այլեւ՝ մեկնաբանում: Ընդ որում՝ սովորեցնում էր կատարել ոչ միայն այն, ինչ գրել է յօրինողը նոտային տեքստում, այլեւ այն, ինչ չի գրել, բայց՝ ենթադրւում է: Այն կարող է լինել միեւնոյն ուժգնութեան նշանների արտայայտչականութեան տարբեր դրսեւորումները միեւնոյն ստեղծագործութեան մեջ: Եւ կամ երաժշտական նախադասութեան ուղղութիւնը առաջնորդող ներդաշնագիտական շեշտադրութիւնները, ինչպէս նաեւ ստեղծագործութեան նկարագրի կերպարային եւ ճշգրիտ մեկնութեան պատկերաւոր մանրամասները:

5. Նա սովորեցրել է նաեւ արտայայտչականութեան զգացողականութիւնը եւ նրա նպատակներից է եղել ունկնդրի սրտին հասցնել երաժշտութիւնը եւ ոչ միայն կենտրոնանալ տեխնիկայի վրայ տպատրելով եւ բաւարարելով հանդիսատեսին երաժշտութեան արտաքին երեւոյթներով: Նա նաեւ կարեւորել է գունազարդ համահնչիւնները լսելու ունակութիւնը, նրանց բազմաշերտ հնչերանգը՝ տեսական եւ վերլուծական տեսակէտից, ընդգծելով եւ բացայայտելով թաքնուած երաժշտական եւ գեղագիտական նրբութիւնները տուեալ ստեղծագործութեան մէջ:

6. Ճելալեանն իր սաներին սովորեցնում էր ոչ միայն տիրապետել կատարողական արուեստի զինանոցին, այլեւ ստեղծել գեղարուեստական որակ, ծանօթացնելով տարբեր դարաշրջանի գեղագիտական իւրայատկութիւնները, արժեչափերն ու աւանդոյթները:

7. Բնականաբար, նրա ոչ բոլոր սաներն են ընտրել երաժշտի մասնագիտութիւնը: Այդուամենայնիւ, Ճելալեանի մօտ պարապմունքների շնորհիւ զարգացել է նրանց գեղարուեստական ճաշակը:

8. Ճելալեանի աշակերտները համերգերով բազմիցս են հանդէս եկել: Դեռեւս պատանեկան տարիքում բեմ դուրս գալու հնարաւորութեան շնորհիւ՝ Ճելալեանն իր սաների մօտ զարգացրել է բեմում ելոյթ ունենալու փորձը եւ նրանց մէջ սերմանել ինքնավստահութիւն:

9. Աշակերտական այդ համերգերից շատերն իրենց երաժշտական բարձր մակարդակի շնորհիւ արժանացել են մամուլի ուշադրութեանը, եւ դրանց մասին յօդուածներ են տպագրուել տեղական մամուլի էջերում:

10. Արեւմտաեւրոպական ստեղծագործութիւնների կողքին նա իր սաներին յանձնարարում էր նաեւ հայ երաժշտահանների ստեղծագործութիւնները, ինչը նաեւ համարւում է Սփիւռքում հայապահպանութեան կարեւորագոյն քայլերից մէկը:

11. Ճելալեանի՝ որպէս մանկավարժի, հիմնական խնդիրն էր յետագայում ցանկացած բարդութեան ստեղծագործութիւն արհեստավարժ բարձր մակարդակով կատարելու համար անհրաժեշտ երաժշտական հմտութիւններով օժտուած երաժիշտ պատրաստելը:

THE CHARACTERISTICS OF THE PEDAGOGICAL METHOD OF THE LEBANESE ARMENIAN COMPOSER BOGHOS GELALIAN

(Summary)

GARO AVESSIAN
maestro434@yahoo.com

Over the course of his career as a composer, the Lebanese-Armenian Boghos Gelalian (1927--2011) made a remarkable contribution to the preservation of Armenian cultural heritage in the Diaspora as well as to the development of the Lebanese performing school of art and music. In addition, he prepared a significant number of piano performers and an educated circle of music lovers in Lebanese cultural society.

Gelalian was a devoted instructor and a skilled pedagogue, who revealed his students' musical abilities and developed their skills by informative and educational methods with painstaking care and unremitting attention.

This article studies and reveals the methods of his teaching and his pedagogical approaches through a set of interviews with some of his students who participated in a concert held on May 12, 1996 in Ashrafieh. The author has been able to conduct in-depth interviews with most of the participants in the said concert, including Ani Gadayian, Ani Keropian, Aline Dantzigian, Elda Deguirmenjian and Nayiri Seropian-Seferian. The author has also interviewed a number of other students of Gelalian who have become leading figures in the field of education and music performance, including Aline Tekelian, Lisa Tutunjian, and Serouj Krajian.

The basic answers of each interviewee to these seven-question interviews, which reflect their experience with their piano teacher, have been compiled separately.

Finally, the author has analyzed their statements and observations and compiled a general set of methods Gelalian used to apply in teaching his piano students.